

# ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.

Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և առաւօրեայ)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լեզուի վերանորոգիչներ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիւղացիական թատրոնի ռուսաւարտներ. Նա-մակ Հին-Նախնականից. Նամակ Երևանից. Նամակ Բաթումից. Նամակ Հին-Նախնականից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր քաղա-քական գրքից. Ապստամբութիւն Կրեմլի մէջ. Նամակ Եփեսոսից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՅԻՄԵՐ. — ՏԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

## ԼԵՋՈՒԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՆԵՐ

Այս օրերս հրատարակվեց Թիֆլիսում պ. Ղազարոս Աղայեանցի «Մեր ուսուցիչ-ներին նուէր» (կարգացե՛ք նուէր) վերնա-գրով գրքիկը:

Պ. Աղայեանցի հայոց լեզուի չին արէն ուղղագրութիւնը նոր բան չէ. այդ մասին արդէն շատ անգամ խօսվել է «Մշակում», գուցէ, նոյն իսկ աւելի է խօսվել, քան ար-ժէքը...

Բայց այժմ, այդ նոր բնութիւնով պարուն-հանդէս է դալիս մի նոր դերում, այն է լեզուագէտ-վերանորոգիչ զի կ ա տ օ Ր ի դե-րում:

Կարգացե՛ք բնութիւնը հետեւեալ կտորը (երես 32—33).

«Մեր ներկայ գրական լեզուն դեռ ևս մուտք չունի մեր ատենական տեղերում, մեր հրատարակչութիւնները (հրատարակ-գրութիւններ) իրար հակառակ ուղղութիւն ունեն (ունեն) բռնած: Միայն «Մշակը» իրրեւ ազատամիտ և յառաջդէմ (առաջա-դէմ) լրագիր, իրրեւ բարեփոխութեան բա-րեկամ և պաշտպան կարող էր իր ժողո-վրդականութեամբ (ժողովրդականութեամբ) այս խնդրին մեծ դարձ առ և յառաջ (ա-ռաջ) մեր բայց դեռ խմբագրի պ. Ար-ծրունին ուղղագրութեան խնդրում ափսո-սալու չափ յետաժող է: Իր ընդունած ուղղագրութիւնը յառաջ (առաջ) միշտ կա-րող չէ, ուրիշի մշակած է և երբեք չի ըն-դունիլ (ընդունի): Նա մինչև անգամ ճի-ծաղում է ինչ վրայ և ասում է Աղայեան-ցի գլխումը (գլխում) մեկ է ցըցել (ցըցել) ոչ ոք հանել չի կարող (չէ կա-րող): Եւ ճշմարիտ է ասում: Այդ մեկը ինքը պ. Արծրունին է ցըցել (ցըցել) իր նորահար (չ) և քմահաճ (չ) ուղղագրու-թեամբ (ի՛նչի է ը. չը կայ վերջը, ինչպէս ժողովրդականութեամբ, որով թէ իրան է վնասում և թէ մեզ: Ապագան կը դա-տապարտէ պ. Արծրունուն (նոր մարդարէ է դարձել պ. Աղայեանց), եթէ այժմէն իսկ, քանի ուշ չէ, քանի որ մի զօրեղ օր-դան ունի ձեռքին, մեր կողմը չանցնի և մեզ հետ չը միանայ (օհօ, մեր կողմը մեզ հետ, ուղբեր էք դուք): Ձը կայ մեր մէջ ոչ մի վարժապետ, որ «Մշակ» ուղղա-գրութիւնը սովորեցնէ (սովորեցնէ) իր աշա-կերտին: Ձը կայ և ոչ մի դասագիրք, որ «Մշակ» ուղղութեանը հետեւէ (հետեւէ): Մեկն է, մեն մեկն իր ուղղագրութեամբ: Կամ այն է, որ պ. Արծրունին արտաքոյ կարգի մի հանձար է, որ մեր խելքը չի հասնում (որին մեր խելքը չէ հասնում), որ ուղղագրութեան վերաբերութեամբ նրա բռնած ընթացքն է ուղիղ, և կամ այնքան քիչ է հասկանում հայերէն ուղղագրու-թիւն, որ տարրական բաներ չը գիտէ:

Ի հարկէ պ. Աղայեանց, դուք ամենեւից աւելի էք հասկանում ամեն բան, մենք հետեւելով հայոց դարեւոր ուղղագրութեա-նը բոլոր արմատական բառերը այնպէս գրելով ինչպէս գրում էին հայերը Մե-րօպից ու Սահակից սկսած մինչև մեր օ-րերը, այսինքն աւելի քան 15 դար շարու-նակ, մենք, որ գրում ենք «լեզուի», «Ստուգած», «նուէր», «պատուէր» է այլն, մենք ոչինչ չենք հասկանում, իսկ դուք, որ գրում էք ձեր չինարէն ուղղագրութեամբ

«լեզուի», «Ստուգած», «նուէր», «պատու-ւէր» և այլն, — դուք ամեն բան էք հաս-կանում...

Եւ ի՛նչ յանդիմութիւն. «քանի ուշ չէ, միացե՛ք մե՛զ հետ, մեր կողմն անցե՛ք»:

Ուղբեր էք դուք. Աղայեանց հանդիմաւոր կերպով պատասխանում է. «ես», «Մուրճը» և «Աղբիւր-Տարազը»...

Տան և հինգ դար շարունակ խեղճ հայե-րը իրանց լեզուի ուղղագրութեան կողմից մոլորութեան մէջ էին գտնվում, մինչև որ չը յայտնվեցան քսաներորդ դարի նախնե-թաց օրը պ. պ. Աղայեանց, Արտախանեանց և Տիգրան Նազարեանց վերանորոգիչները:

Ուղիղ էք ասում, որ «Մշակը» միշտ բարեկամ է վերանորոգութեան, բարեփո-խութեան, — բայց սխալվում էք, որ նա կարող է բարեկամ լինել լեզուի անձնուց-նելուն, այլանդակելուն և աղաւաղելուն:

Ու՛մ կը դատապարտէ ապագան, այդ մենք չենք վստահանում: Աղայեանցի պէս դրականապէս մարդարէանալ, այդ ցոյց կը տայ ապագան... Եւ եթէ մենք այդ չենք տեսնի, այդ կը տեսնեն մեր երեխաները, կամ թոռները: Միայն այսքան գիտե՛ք, որ չարաշար սխալվում էք կարծելով որ «Մը-շակը» մեն մեկն է իր ուղղագրութեան մէջ: Այն հազարները, այն ռազմաթիւ ին-տելիգենցիան, այն հազարաւոր կարգացող-ները և հարիւրաւոր աշխատակիցները, ո-րոնք «Մշակը» գործերը, «Մշակը» ոյ-ժը, նրա ստեղծած դպրոցն են կազ-մում, — նրանք են, որոնք կարծում ու զը-րում են մեր ուղղագրութեամբ: Դուք խոս-տովանում էք որ «Մշակը» գործը օրգան է. ապա ի՛նչ է դրա գաղտնիքը... Գաղա-նիքն այն է, որ բացի քսան տարի շարու-նակ իր յայտնած մեծերից, նա ստեղծել է մի մատչելի լեզու, որով և գրել է միշտ Ահա նրա ահագին տարածման և ընդու-նելութեան գաղտնիքը: Բայց ի՛նչ է նրա ստեղծած լեզուն. հայերէն հին լեզուի հարապատ հիմնական ուղղագրութիւնը, հեշտացրած մի քանի բարեփոխութիւննե-րով, որոնք յարմարեցրած են աշխարհա-բար, ժամանակակից, ազգի խօսած, կենդա-նի լեզուի ոգուն, և ձուլված ընդհանուր մարդկային ոճի մէջ: Ընդհանուր մարդկա-յին, կամ ընդհանուր եւրօպական ոճը հայերէն լեզուի հին գրաբարի հարապատ արմատական, հիմնական ուղղագրութեամբ, հեշտացրած, մատչելի դարձրած ժողովրդա-կան լեզուի ոգուն յատուկ մի քանի բարե-փոխութիւններով. — ահա դա է «Մշակը»:

Լեզուի աջողութեան գաղտնիքը: Ոչ, պ. Աղայեանց, մենք մեկն չենք, ընդհակառակն դուք էք մեկն, քանի որ նոյն իսկ ձեր ընկերակից վերանորոգիչները Արտախանեանց Աւետիսը, և Նազարեանց Տիգրանը ձեզ հետ կատարելապէս համա-ձայն չեն: Նայեցե՛ք նրանց այժմեան գրու-թիւններին. ձեր ամբողջ վերանորոգիչ աղա-ւաղումներից նրանք իրացրել են միմյանի փոքրիկ և, փոխանակ մեծ վ. — ի՛նչ. Այդ է բոլորը: Իսկ ձեր «նուէր-մըւէրները» կրկին ձեզ են թողել վայելելու:

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱՅԻՄԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՌՈՒՍԱՍԱՆՈՒՄ

Այժմ առջև ունենալով Ռուսաստանի գիւղա-կան ազգայնական անկարգութիւն արեւ-ցոյթեան անձնատուր լինելը, Ռուսաստանի մի քա-նի նահանգներում, մասնաւոր Օրբոլեան նահանգ-ով, քանի գաւառներում, ինչպէս Կրօման, Կարա-չեփեան, Լիվնեան, Սկփեան և այլ գաւառների գիւղերում փորձ է լինում հաստատել գիւղացիա-կան թատրոններ: Կարծում են որ թատրոն յա-

ձակելով, գիւղացիք փոքր առ փոքր յետ կը սովորեն կոստաւոր արեւցոյթութիւնից: Ամենեւից լաւ այդ փորձն աջողիլ է Կրօման գաւառի Կրիվիկով գիւղում: Այդտեղ արդէն մի քանի տարի շարունակ գոյութիւն ունի գիւղացիական թատրոն: Նրա հիմնողն ու պահպանողը՝ Կրօ-ման գաւառական աղակականութեան առաջնորդ Շենչին կալուածատէրն է: Շենչին իր հաշուով կառուցել է թատրոն և ի նկատի ունենալով, որ գիւղացիների հասկացողութեան մատչելի թատրոնական ընկերութեամբ Ռուսաստանում շատ աղքատ է, ինքն Շենչին հեղինակել, կամ փոխա-գրել է մի քանի պիեսներ, որոնց խմատը հաւ-կանալի է գիւղացու համար և արմոյց բովանդա-կութիւնը կրթիչ ներգործութիւն պիտի ունենայ գիւղական ազգայնականութեան վրա: Այդ տեսակ պիեսների նպատակն է բարձրացնել գիւղացինե-րի բարոյական և մտաւոր դասակարգման մակերե-ւոյթը, նախ ծանօթացնել նրանց ուստաց պատ-մութեան հետ, ընդհանուր մարդկային գաղափար-ներ ներշնչել նրանց և ապա ընտելացնել գիւղա-ցիներին անտեսաւոր ապրելու մտքին, ներշնչել նրանց մէջ աշխատանքի և խնայողութեան օգտա-ւէտ գաղափար և խաղաղ վերացնել նրանց մի-ջից արեւցոյթի ու յանցաւոր անգործութիւնը: Կրիվիկով գիւղում Շենչինի ձեռքով կառուցված թատրոնն ունի բնական ամեն տեսակ անհրա-ձեշտ պարագաներ: Գիւղացիք, ինչպէս վկայում է «Новости Дня» լրագիրը, մեծ ուրախութեամբ մեծ-յաճախում են թատրոնը, և շատերը գիւղացիների երկու սեռի երիտասարդներից նոյն իսկ ցանկու-թիւն են յայտնում թատրոնատէրների խմբի մէջ մտնելու:

Ռուսաստանի գիւղացիական թատրոնների ը-տելութեամբ մինչև այժմ բարկացած էր գլխաւո-րապէս այնպիսի պիեսներից, ինչպէս «Жизнь за Царя», «Недоросль», «Майская ночь», «Васи-лиса Мелентьевна» «Слава Богу, мужъ лапотъ сплелъ», «Не такъ живи какъ хочется» և այլ նոյն ուղղութեան պիեսներից:

## ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅ-ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐԻ ՌԵՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Բաթումում մեր հայ-կաթոլիկների մէջ ուսում-նարան դեռ ևս գոյութիւն չունի. չը կայ ոչ կանո-նաւոր դաստաւութիւն, և ոչ էլ դասագիրք: Մի և նոյն խղճով դրութեան մէջ է, ինչ որ տարե-ներ առաջ էր. միմյանի մի ուսուցիչ չէ մի վար-ժուհի, մայրապետը՝ եկեղեցու կից սննդականից մինում բաւական են համարում ամբողջ օրը մի քանի մանուկներին վարժութիւն և քերա-կան կրթիւն տալու: Այս բանում մեր հոգեւորա-կանութիւնն էլ երբեք ուղղագրութիւն չէ դարձրել այն ուսման վրա, որը անհրաժեշտ պէտք է, այն էլ Բաթումի պէս մի վիճակում: Միթէ աւելի լաւ չէր լինի, եթէ եկեղեցու փողերը գործածվին մի եկեղեցական-ծխական երկսեռ ուսումնարան հիմնելու վրա, ինչպէս մեր համարին եղբայրները հայ-ուսաւորչականներն ունեն: Ինչու մենք էլ չը պէտք է ունենանք կանոնաւոր ուսումնարան ու-սուցիչներով, որտեղ դաստիարակվին մեր աղ-ջիկները և աղջիկները:

Քանի քանի անգամ այս խնդիրը առաջարկված է եղել տեղիս հոգաբարձու քահանային, որի ձեռ-քում են գտնվում եկեղեցու բոլոր գործերը, սա-կայն նրա կողմից բերված զանազան պատճառնե-րով ուսումնարանի հարցը միշտ յետաձգված է:

Կոլկասում հայ կաթոլիկների մէջ ազգի և ե-կեղեցու վերաբերեալ գործերի իրաւասութիւնը մեծ մասամբ կրկին տրամադրութեան տակ է. նա է կարգադրում, ինչ որ պէտք է, առանց ժո-ղովրդի համաձայնութեան: Ահա, այսպէս մենք թուրքութեամբ ենք վերաբերվում դէպի մեր իրա-ւունքները: Թէև իրանք հոգեւորականներ խօսքով վերին աստիճանի խոտորաբան չեն ժողովրդի կրթութեան մասին, բայց գործով այնքան յետա-

դէմ, որ ոչինչ միջոցներ չեն գործ դնում նպա-տակին հասնելու համար: Ինչ կարող է անել մը-տաւորապէս նեղ շրջանում մեծացած և չը դար-գացած մայրապետը, բացի քրիստոնէական պարո-տիքը մանուկներին սովորեցնելուց. չէ որ նրանք, մեր աղջիկները, ապագայում մայր պէտք է դառ-նան և գաւառների տէր. նրանց հարկաւոր է մայ-րենի դաստիարակութիւն, միանգամայն անարա-րւութիւն, քանի որ կից ընտանեկան կեանքից անփորձ է, ընդունակ չէ. ինչպէս ուրեմն նա կարող է ապագայում որպէս լաւ դաստիարակված մայր, պատրաստել մանուկներին, կամ ինչպէս կարող են երեխաները ապագայում լաւ ժողովր-դական անձինք լինել, սովորելով այն ուսուցիչ մօտ, որը մինչև իսկ տարրական ուսումնարանը չէ աւարտած:

Իրերի այս հանգամանքը ի նկատի առնելով, ժողովուրդը դիմեց վերջին անգամ տեղիս ժողո-վրդապետ քահանային՝ ժողով կազմել իր նախա-գահութեամբ ուսումնարանի նոր բարեկարգու-թեան համար, որտեղ կազմված նոր ծրագրի հա-մեմատ ընտրվեցան եկեղեցու գործերին նայող մասնաւոր հոգաբարձական անդամներ Սակիս-ժողովրդապետը այս ընտրութիւնը օրինաւոր չը համարեց, մինչդեռ ժողովը մեծամասնութիւնը ընդունեց: Կարծում ենք, որ բաւական է ինչ-քան որ մնացե՛ք անշարժութեան մէջ: Բայց մենք յուսով ենք, որ մեր հոգեւոր բարձր իշխա-նութիւնը, որին մենք գործի հանգամանքը մաս-յաճախում են թատրոնը, և շատերը գիւղացիների երկու սեռի երիտասարդներից նոյն իսկ ցանկու-թիւն են յայտնում թատրոնատէրների խմբի մէջ մտնելու:

\*\*\*

## ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻԱՆԻՑ

Հոկտեմբերի 8-ին

Անցեալ սեպտեմբերի 20-ին բացվեց տեղիս հայոց երկղատեան երկսեռ ծխական ուսումնա-րանը, ի հարկէ առանց մի որ և ից հանդէսի և ուսուցչական խումբ կազմվելու: Պակաս են մինչև այժմ մի ուսուցիչ և մի վարժուհի: Գեռ այդ ոչինչ, այլ պէտք է ասել ինչ ինչ է ներկա-յացնում այդ ուսումնարանը, ուր են 1886 և 1887 թվերի ուսանողները: Բաւական է ասել, որ 2—3 հազար հայ հասարակութիւն ունեցող մի գաւառա-կան քաղաք, որտեղ մեծ կարողութիւն ունեցողնե-րից շատերն կարելի է մասնացոյց անել, տալիս է իր միակ ուսումնարանին մօտ 50 աշակերտներ, այն ինչ մօտակայ գիւղերում աշակերտների թի-ւը, օրինակ Զահկում, Զուրաբուրում և այլ գիւղե-րում աշակերտները կրկնապատիկ են: Հասկանա-լի է թէ որքան սէր և պահանջ կայ մեր հասա-րակութեան մէջ դէպի ուսումն աստիարակ և դէպի մայրենի լեզուի ուսումն յատկապէս և որ-քան սարսափելի անտարբեր է հասարակութիւնը դէպի իր ուսումնարանը, որը կազմում է նրա միակ հասարակական հիմնարկութիւնը:

Ուսումնարանի շէնքերը անարար են, հասցած են, կարօտ են վերաշինութեան. թէև տարիներ առաջ մի խնդրելով, զինու. աղեցողութեան տակ, ստորագրութիւն էր բացվել նոր շինութիւն կա-ռուցանելու ուսումնարանի համար, բայց ոչինչ չեղաւ... Ուսումնարանի նստարանները հաղա-բեան ձեռով են շինված և կոտորալված, այնպէս որ նրանք զգալի կերպով վնասում են աշակերտ-ների կանոնաւոր պարագմունքներին: Աշակերտ-ներից և աշակերտուհիներից շատերը աղքատ դա-սակալից են, միջոց չունեն ոչ միայն դասական իրեղէններ դնելու և ուսման վարձը վճարելու, այլ և վայելուչ կերպով չհագնվելու: Ուսումնարանը չունի գրադարան, չունի պատկերներ, մօլդէներ և այլ անհրաժեշտ իրեր: Մի խօսքով տեղիս ուսում-նարանն ունի այնպիսի պակասութիւններ, որոնք



պատու չեն բերում նրա մասին հոգացող հասարակութեանը։ Ուստի պարտք է հողաւ պարտքի մասին Միջին միայն հողաբարձութեանը։ Ոչ հողաբարձութիւնը առանց հասարակութեան աջակցութեան մի մեծած մարմին կը լինի։ Տեւեք, օգնեցէք և պահանջեցէք, և այն ժամանակ միայն իրաւորեցի կը լինի ձեր արդարացի պահանջը։

Ամսին 4-ին, կիրակի օր, տեղին հայոց ուսումնարանի դահլիճում տեղի ունեցաւ ծխական ուսումնարանի հոգաբարձական ընտրութիւնը։ Ժողովը փայլում էր հասարակութեան բացակայութեամբ։ մասնակցում էին միայն մի քանի յայտնի անձնաւորութիւններ, իսկ հասարակ դասակարգը բացակայ էր։ Նա սովորութիւն չունի մի օր և է հասարակական ժողովին մասնակցելու։ Ուսումնարանի ունի մասնաւորապէս 3000 լուրջի դրամագումար սրա նրա մօտ տուած, առանց տօկոսի, և այն էլ մօտ տասը տարի է անցել, որ հողաբարձութեանը ոչ մի հաշիւ դեռ չեն ներկայացրել հասարակութեան, այլ ամեն տարեկան տօկոսի միջոցին միայն աւագ-ուսուցիչը թղթի վրա է այդ ներկայացնում հասարակութեան, որը կարծում է թէ իրաւ ուսումնարանի այդ փողը մի ահագին դրամագումար է կազմում, որով կարելի է այն էլ երկրպագան ուսումնարան պահել։ Բայց հասարակութիւնը չարաչար սխալվում է. նա չէ իմանում թէ այդ փողերով չէ կարելի երկրպագան ուսումնարան պահել, որի տարեկան ամենաբարձր ծախսը լինում է երկու հազար լուրջի և այդ գումարը քրտեղից պէտք է լրացնել։ Եթէ ինքն հասարակութիւնը չը լրացնէ, այն ժամանակ դպրոցը պէտք է ունենայ մի օր և իցէ մշտական աղբիւր։ Բայց դժբաղդաբար այդ էլ չունի։ Ուստի մենք յետոյ ենք, որ նորընտիր հոգաբարձութեանը, որոնք են պ. պ. Ն. Հախնապետեան և Ղ. Բաղդասարեան, մեծ ճիշդ կը թափեն ամեն կերպ ուսումնարանին խնդիրը։ Գործիւնը բարձրագույնը հասարակութեանն ուղարկելով մեծ էր այդ ընտրութեան առիթով, ամենքը հաստատ համազօրում են, որ այդ նորընտիրները իրանց եռամեայ կառավարութեան միջոցում մեր երկրպագան ուսումնարանը կը բարձրեն։ Տայ Աստուած և անկեղծօրէն ցանկանում ենք, որ մեր այս յոյսն իրագործվի և նորընտիր հոգաբարձութիւնը կատարէ հասարակութեան ցանկութիւնը և ցոյց տայ դժգոհներին, որ նրանք չարաչար սխալվում են։

Ա. Տ. Մ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հոկտեմբերի 7-ին

Երեւանում առևտուրը այս վերջին ժամանակներում ընդարձակ ծաւալ տեսնալով, բաւական առաջ է գնացել և հետզհետէ աւելանում են վաճառականական անիւրը, որոնք մեծ չրջանաւորութիւններ են ունենում։ Մօակվայի և Պարսկաստանի հետ։ Յայտնի բան է, գործը որքան առաջ է գնում, այնքան էլ գործառնորսների մեծ պահանջ է զգացվում, այդպիսով առաջ են գալիս աշխատաւոր ձեռքեր, որոնք այս կամ այն առևտրական չրջանի մէջ մտնելով, կարողանում են վատաւել մի քանի հարիւր լուրջի տարվայ ընթացքում։ Բայց այդպիսի իրողութիւն իրապէս մեղաւորում տեղի չունի, չը նայելով որ հանգամանքները նպաստաւոր են. չունենք երկրաւարը և փողը ինչ կըլի մեծ գործակատարներ, չունենք, որովհետեւ մեր վաճառականները դեռ չեն հզօրացնում անհրաժեշտութիւնը որ պիտի լինի օգտակարութեան մասին գաղափար չունենա։ Առհասարակ գործակատարների վրա նայում են ինչպէս մի գողի, աւազակի վրա, իսկ այդպիսի թիւրիմաց եղբայրացութեան են հասել անցնալով կատարված այնպիսի սի երեւոյթներից, որոնք առաջացած են եղել իրանց անհեռատեսութիւնից, մեր վաճառականը երբէք չէ համաձայնվել ընդունելու իր խնամութիւն մի աղբիւր և կըլի մեծ երկտեսարար մի որոշեալ վարձով, այլ ուրախութեամբ ընդունել է այնպիսի փողոցային տղաներին, որոնք համաձայնվել են ծառայելու անվարձ և մի և նոյն ժամանակ գաղտնի անցնալով մի քանի հարիւրականներ։ Հէնց այդ է, որ մեզանում վաճառականները չեն ուզում հաշտվել գործակատար վարձելու գաղափարի հետ, և չունի գողութիւն գործակատարների չրջան։ Այժմ կան մի քանի խանութներում գործակատարներ, որոնց մեծ պրօցէնտը ծառայում է անվարձ, իսկ միւսները ստանում են շատ ցածր վարձատրութիւն։ Այն գործը, որը պահանջում է

իննք կամ վեց ծառայող, դրանց տեղը այժմ բռնում են երկուսը կամ երեքը, որով և գործը աւելի դանդաղ ընթանալով՝ որոշմունքի ծառայողները ստիպված են լինում աշխատել առաւօտեան վաղ ժամը 6-ից սկսած մինչև զիշերայի ժամը 9-ը կամ 10-ը, իսկ այդպիսի ֆիզիկական մեծ աշխատանքի տակ ճնշված լինելով, ազատ չեն լինում գոնէ տօն և կիրակի օրերը, իրանց թուլացած ուժերը կազդուրելու։ Այդ գործակատարները տղէտ են և զուրկ ինքնուրոյնութիւնից։ Թող վաճառականը բարեհաճէ բարեփոխութիւն մտնելու իր գործակատարների մէջ, առաջ բերէ բանխոյս, հասկացող երկտեսարաններին, այն ժամանակ երևան կը գալ թէ որքան գերակշռող է դիվիդենդը դեֆիցիտից, երբ գործը առաջ է գնում ոչ ձրիավարների և համբալների ձեռքով։

Հ. Վ.

ՆԱՄԱԿ ԲԱՅՈՒՄՆԻՑ

Հոկտեմբերի 15-ին

Ուսումնարանի նոր շէնքը առաջ է գնում ամենայն աջողութեամբ. հաւաքված փողի գումարը առայժմ հասնում է 3000 լուրջու, որից 700 լ. երէկ մի քանի ժամկէտ մէջ հաւաքեցին պ. պ. Խոջամիրեան և Խաչատրեան։ Այդ գումարի կէսից աւելին եւրօպայեցի են տուել։ Հայերից մի մասը չէ ուզում մասնակցել այդ նուիրատուութեան զանազան եկեղեցական հաշիւների պատճառով։ Մենք կարծում ենք որ, որքան էլ արդար լինէին եկեղեցուց հաշիւ պահանջողները, նրանք ուսումնարանը ու եկեղեցին չը պիտի խառնէին միմեանց հետ։

Մենք ամենքս էլ գիտենք, որ ուսումնարանի շէնքիւնը բարեբաղդաբար գտնվում է այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք ամենայն ջանքով տալու են գործը և զուրկ կը բերեն շէնքիւնը առանց որ և է արգելքի վրա ուշադրութիւն դարձնելու։ Եւ քանի որ հասարակութիւնը տեսնում է իր տուածի արդիւնքը, քանի որ համոզված է, որ չեն կորչել իրան կապէկները անհարապատ ձեռքերում, նա նոյն եռանդով և նոյն համակրութեամբ կը տայ նաև մնացած գումարը։ Ուստի հարկ չը կար, որ մի քանի մարդիկ դուրս մնային բարի գործից ուրիշների արած կեղտոտութիւնների պատճառով, որոնք համար քննիչ կը կը գայ անպատճառ։

Ուսումնարանի շէնքը կառուցվում է ծով ափին, այդիկ մօտ, քաղաքի ամենալաւ մասում, որտեղ օդը թէ աւելի մաքուր է և թէ առողջարար։ Ենթեր քաղաք է, ընդարձակ սենականերով և լայն պատուհաններով։ Ծախս որոշված է անել 7—8000 լուրջի, բայց չենք աւելի թմնող կարծիքնայ, որովհետեւ նրբիւրից մեծ մասը էժան և նոյն իսկ շատ անգամ ձրի են ձեռք բերվում։

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ՀԻՆԵՆԱԽԱՆԻՑ

Հոկտեմբերի 11-ին

Աւելորդ չենք համարում յիշել տեղիս սանիտարական խմբի գործունէութիւնը էպիդէմիայի ժամանակ։ Երբ խօլերան համաճարակի կերպարանք էր ստացել, գրեթէ ամբողջ Վովկասի երկիրները, նոյնպէս մեր գաւառը, մեր Բարեգործական ընկերութիւնները, պէտք է ասած որ քնած էին այդ ժամանակ. միայն աջակցութեամբ մեր մամուլի կառուցաւ գարիներ թիֆլիսի Բարեգործական ընկերութիւնը, չը նայած որ ուշ էր։ Հին-Նախիջևանում խօլերան սկսեց կոտորածներ անել յուլիս ամսին 3-ից և տեղի մինչև օգոստոսի 10-ը։ Այդ ժամանակամիջոցի վերջերս Բարեգործական ընկերութիւնն օգնութիւն հասաւ, այն է յուլիսի 22-ին ուղարկելով մի հեռագիր տեղիս ճիւղին թէ Բարեգործական ընկերութեան ժողովը վճռեց առ Նախիջևան քաղաքին, նոյնպէս գաւառին 400 լուրջի։ Բայց ոչ էին տեղիս ճիւղի անդամները, ինչու էին լուել և մի պատասխան անգամ չէին ուղարկում ուղարկել. միթէ նրանք աչքի առաջ էին անում նրանք։ Վերջապէս եկաւ յուլիս ամսի 30-ը, երբ արդէն քաղաքում դադարել էր խօլերան, բայց գաւառում շարունակում էր կոտորածներ անել։ Տեղիս Բարեգործական ընկերութեան ճիւղի անդամները հեռագրով պահանջեցին այդ գումարը, որը ստացվեց տեղի օգոստոսի 1-ին և որը հեռագրով փոխադրել էին։ Տեղիս սանիտարական խմբի անդամները մէկը մեկ յիշեցնում է, թէ միթէ

Բարեգործական ընկերութեան ճիւղը չէր որ նորիս գիւղիս ուղարկեց մի ֆէլդշեր օգնելու գիւղացիներին և միթէ նա չէր, որ խրատներ էր տալիս ժողովրդին։ Ինչու համար սանիտարական խմբի անդամը յիշում մեկ այդ գիւղը, թողնելով կամ յիշողութիւնից զրկելով է Աստապատ, Գուշուտի և Այլաբաթ գիւղերը, որտեղ մեծ կոտորածներ էին լինում, մինչև անգամ վերջինում երկու անգամ սկսվեց միջոց տալով 5 օր, և պէտք է ասած այդ երեք գիւղերից մեծագոյնը մեծ պրօցէնտ էին կազմում գաւառին մեծագոյնի միջոց։ Բայց մեր սանիտարական խմբի անդամները կարողացան միայն մեր քաղաքում մի օր դադարել և թէ չէ ու չաքար բաժանել աղքատներին, չը տալով նրանց ոչինչ խրատներ խօլերայից չը վարակվելու համար, և վերջերս գոնէ չուղեցին զէլինֆէկցիայի ենթարկել վարակված տները։ Իսկ ինչ կը վերաբերէ «Մշակի» № 111-ի մէջ գրված տեղեկութեանը տեղիս սանիտարական գործունէութեան համար՝ նա անհիմն է։ Ահա մեր սանիտարական խմբի աշխատութիւնը։

Ե. Պոզուսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՍԵՐ

Շաբաթ օր, 17-ին հոկտեմբերի, Թագաւոր Կայսրի և Կայսերական Ընտանիքի հրաշալի փերիլեան օրը, Թիֆլիսի Սիօնի մայր-եկեղեցում կատարվեցան հանդիսաւոր մաղթանքներ։ Նոյնպէս մաղթանքներ կատարվեցան և քաղաքիս քրիստոնէական միւս տաճարներում։ Թիֆլիսի փողոցները վաղ առաւօտվանից դադարված էին դրօշակներով, իսկ երկիւղանք քաղաքը լուսաւորված էր։

ՋԱՒԱԼ-ՕՂԼՈՒՑ մեկ գրում են. «Տեղիս հասարակութիւնը շնորհ է անում իր ուսումնարանները նրբական կողմից ապահովեցնելու։ Հասարակութիւնը համախառնական վճարով որոշել է զիւրկ կողմնակի աղբիւրներից տարեկան 600 լուրջի տալ յօգուտ թէ տղայից և թէ նոր բացվելի օրերուց դպրոցի։ Եկեղեցին տալիս է 120 լուրջի, աշակերտներից և աշակերտուհիներից ստացվելի թողարկումը հաշուում են 600 լուրջուց ոչ պակաս։ Ուրեմն ընդամենը 1320 լուրջի։ Սակայն որքան գոյելի է հասարակութեան եռանդը, նոյնքան պակասակելի է հոգաբարձութեանը անփոյթ գործունէութիւնը։ Մտադրութիւն կայ այստեղ գրադարան-ընթերցարան հիմնելու. այս մասին աշխատում են մի քանի տեղացի երիտասարդներ։ Ջալալ-Օղլում, առհասարակ, ընթերցանութիւն շատ քիչ է տարածված։ Այդ գիւղը շատ յետ է մնացել ամեն բանում։ Լրագիրներ ոչ դր չէ ստանում։ Ջալալ-օղլեցին կարգաւ չէ սիրում, այլ մեծ մասամբ դատարկութեամբ է զբաղված։»

ԲԱՅՈՒՄՆԻՑ մեկ գրում են. «Մեր քաղաքը օրինաւոր քաջանանքի կարիք ունի։ Սակայն մի քանի պարսիկներ այժմ ամբողջ քաղաքում այնպիսի երեք անձանց համար խնդրագիր են պատկերում, որոնք կատարելապէս տղէտ են և արժանի էլ չեն քաջանայ ձեռնադրվելու։»

Ստացանք Եւրօպայի Թումանեանցի «Խօլերա» վերնագրով վաղվից, որն արտատպված է «Տալաղ» շաբաթաթերթից, և արժէ ընդամենը 10 կօպէկ։ Գրքովը տպված է թիֆլիսում «Արօր» տրպարանում։ Գրքովը ստանալու համար օտարաքաղաքացիք կարող են դիմել «Տալաղ» խմբագրութեանը։ Վաղվից բաւական ծիծաղաշարժ է և տեղ տեղ նոյն իսկ սրամիտ է։

Հոկտեմբերի 16-ին, ինչպէս հաղորդում է «Դիմ. Լիստոք» լրագիրը, վախճանվեց իր կալւածքում Թիֆլիսի նոստար Գաւիթ Նիպիտի, 57 տարեկան հասակում։ Հանգուցեալն առաջ պետական ծառայութեան մէջ էր գտնվում և մի քանի տարի շարունակ վարում էր նախ ֆուլթայիտում և ապա Թիֆլիսում հաշտարար դատաւորի պաշտօնը։ Թէ այդ պաշտօնում և թէ նոստարի պաշտօնում հանգուցեալը վաղելում էր հասարակութեան կողմից ընդհանուր յարգանք։

«ԱՌՈՆԵՅ» թերթը հաղորդում է հետեւեալը. «Թիֆլիսի հայոց թատրոնական մասնաժողովը իր կայացած վերջին նիստում որոշեց յայտնել խմբի անդամներին, որ մասնաժողովը, զրամական միջոցների պակասութեան պատճառով, անկարող է

ուճիկներ վճարել դերասաններին և հրաժարվում է թատրոնական գործը ղեկավարելուց։»

Մեկ գրում են ՕԳԵԱՍՅՈՒՑ որ այդտեղի «ՕԴԵՍՔԻՅ ԼԻՍՏՈՔ» լրագրի խմբագիր-հրատարակիչ, պ. Նավրոցկի, սեփական տուն է կառուցել քաղաքի ամենալաւ տեղում, քաղաքային թատրոնի դիմաց, որտեղ կը գետնով լրագրի խմբագրութիւնն ու տպարանը և նոյն տան մէջ պ. Նավրոցկի երկու մեծ դահլիճներ զիշել է հանրամատչելի ընթերցարանին։ Այդտեղ կը ստացվեն Ռուսաստանում ամեն լեզուներով հրատարակվող բոլոր լրագիրները և ամսագիրները, նմանապէս և արտասահմանեան պարբերական հրատարակութիւններից ամենանշանաւորները։

ԿԱՂԱՅՈՒՄՆԻՑ մեկ գրում են. «Կողբի ճանապարհի վրա, գլխաւորապէս Պուլկանդ գիւղի մօտ քիւրդերը անդադար աւազակութիւններ են առնում։ Այս տարի յիշեալ կողմերում գրեթէ ոչ մի ճանապարհորդ ազատ չէ մնում կողոպտվելուց։»

«Տալաղ» շաբաթաթերթը հետեւեալ հարցն է առաջարկում մեզ. «Ցանկալի էր որ «Մշակը» պարզ յայտնէր, արդեօք «Տալաղին» չէին փող ուղարկել Թաֆլիսի մասնաժողովը կառուցանելու համար, թէ ապարդիւն կը համարէր հայ ազգը Թաֆլիսի մասնաժողովը կանգնեցնելու համար փող տալ։ Կատարում ենք «Տալաղին» ցանկութիւնը և պարզապէս պատասխանում. հայ ազգը այնքան գործնական է, որ ոչ «Տալաղին» և ոչ էլ ուրիշին 10,000 լուրջի չի տալ իր երկեղի մարդկանց մինչև վրա արձան կանգնեցնելու համար, մինչև որ նոյն երեկի մարդու ընտանիքը նիւթական կարօտութեան մէջ է։ Իսկ իր օր և է երեւելի մարդու ընտանիքին ապահովելու համար, որի յիշատակին հայը ամեն տեղ հուշահանգիստներ է կառուում, որի մասին խօսք չէ գտնում մահից յետոյ գովաբանելու՝ ամբողջ հայ ազգը կարող է շատ շատ մի 5 հազար լուրջի հաւաքել։ Հրապարակագրողի յատկութիւններից մէկն էլ պէտք է այն լինի, որ նա երբեք չը պիտի յափշտակվի երեխայական ցնորքներով։ Դա է այդ հարցի վերաբերմամբ մեր վերջին պատասխանը։

Լոյս տեսաւ Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ Հէկապոլի «Մակեթ» տրեքլուքիւնը, որ թարգմանել է պ. Ստեփան Մալխասեանց։ Գիրքը թարգմանված է հայոց հին առաջադիւթեամբ։ Թարգմանողը, գրքի սկզբում, մի բառական երկար առաջաբանով բացատրում է հայոց առաջադիւթեան կանոնները։ Գիրքն արժէ 50 կօպէկ, մեծագիր է և բացի առաջաբանից՝ բաղկացած է 108 երեսից։ Տեղված է «Արօր» տպարանում։

Ռուսաց «ВРАЧЪ» բժշկական թերթը խօսելով խօլերայի մասին, ասում է թէ այդ ախտի պիժղեւ ևս նուազած չէ և պէտք է սպասել որ եկող 1893 թվին խօլերան աւելի աստուղի կը լինի։ Մինչև այժմ եղած համաճարակները միշտ տեղի են ունեցել երկու տարի իրար ետեւից և երկրորդ տարին աւելի ուժեղ են եղել, քան առաջինն աւելին։ Այդ երեւոյթը նկատելի եղաւ 1852—53 թվին, 1865—66-ին, 1870—71-ին և ամենից խիստ կերպով 1830—31-ին և 1847—48 թվին։ Ահա խօլերաները. 1830-ին խօլերան եկաւ Ասիայից և գրաւեց Ռուսաստանում 31 նահանգ, կոտորելով 37,000 հոգի։ հետեւեալ 1831 թվին նա ճարակեց 48 նահանգ և կոտորեց 197,069 հոգի։ 1847-ին նա ճարակեց 33 նահանգ և կոտորեց 77,719 հոգի. յաջորդ տարին գրաւելով 49 նահանգ նա կոտորեց 690,150 հոգի։ Նկատված է և այն, որ Ասիայից եկած խօլերան միշտ աւելի խիստ է լինում, քան Եւրօպայի կողմից մտնողը, որպէս էր 1852 և 1865 թվականներին։ Դատելով անցեալ փորձերի հիման վրա, կարելի է գուշակել որ խօլերան կը կրկնվի և եկող տարին, ուրեմն պէտք է զինված պատրաստ մնանք եկող տարին էլ դիմադրելու խօլերային համաճարակին։

«Տալաղ» շաբաթաթերթին գրում են, որ Դուրա գաւառի Սարուշէն գիւղի ուսումնարանի հիմնադիր պ. Գրիգոր Այվազեան նորերումն այցելելով իր ուսումնարանը և անձամբ տեսնելով ուսումնարանի վարիչների եռանդը, շնորհալաւութիւն յայտնեց նրանց և ընծաներ բաժանեց թէ ուսուցիչներին և թէ աշակերտներին։ Բացի արանից պ. Այվազեան ցանկութիւն յայտնեց իր



հաշուով նորոգել տալ Ամարտի Ս. Գրիգորիսի վանքը:

Ստացանք պ. Ղազարոս Աղայանցի «Մեր ուսուցիչներին նուէր» (կարգաբեկ նուէր) փոքրիկ բրոշուր: Տպւած է Թիֆլիսում, «Արօր» տպարանում, ներկայ 1892 թվին, և բաղկացած է 35 երեսից: Մեր կարծիքը պ. Աղայանցի վերաբերյալ ողջ գործունէութեան մասին մենք չստանա՞նք արտայայտել և նոյն խնդրի մասին խօսուած ենք և «Մշակի» ներկայ համարի առաջնորդում:

Լսում ենք, որ Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը որոշել է իր հիմնական գրասենյակը գործադրել քաղաքում մի շինութիւն գնելու համար, որի մէջ կը գտնուի մատենադարանն ու ընկերութեան գրասենյակը և մի և նոյն ժամանակ արդիւնք կը բերէ:

Մեր լրագրի ներկայ համարի հետ տարածում ենք քաղաքի բաժանորդներին առանձնաբոյժ Հ. Օրբէլի թարգմանած «Հանրամատչելի խորաններ» բրոշուրը: Թարգմանիչը նոյն բրոշուրը ուղարկում է գաւառական զանազան քաղաքներ, ինտելիգենտ անձանց հասցեով, ժողովուրդի մէջ ձրի տարածելու համար:

Մեզ հաղորդում են, որ Բարեգործական ընկերութեան Կարսի տեղական վարչութիւնը դիմել է կենտրոնական խորհրդին և խնդրում է 1000 ռուբլի նպաստ տալ իրան, ի նկատի ունենալով, որ Կարսի նահանգում ժողովուրդը մեծ թշուառութեան մէջ է՝ չունենալով ոչ վառելիք, ոչ հաց, և խօլբայից յետոյ բազմաթիւ ընտանիքներ և որբեր մեծ կարօտութեան մէջ են մնացել: Խորհուրդը իր իրաւասութիւնից վեր գտնելով այդ խնդրի լուծումը, պիտի առաջարկէ ընդհանուր ժողովի բարենայեցողութեան:

Այսօր, հոկտեմբերի 20-ին, քաղաքային թատրոնում կայանալու է ուսաց առաջին ներկայացումը, մասնակցութեամբ տաղանդաւոր ուսուցիչներ և խորհրդակցի Սարգիսեանի, առաջին անգամ կը խաղաղվի «Горькая Судбина», որի տոմսակները վաղորդ արդէն սպառվել են: Առհասարակ չնորսալի արտիստուհու անունը մեծ հետաքրքրութիւն է յարուցել մեր քաղաքի հասարակութեան մէջ, որն անհամբեր սպասում է նրա ներկայացումներին:

Ստացանք Պետերբուրգում պ. Ս. Գուլամի-րեանցի ձեռքով խմբագրված և հրատարակված «Արաք» ժողովածուի ներկայ թիւի առաջին տետրը: Այդ տետրի բովանդակութեան հետ ընթերցողը ծանօթացել է արդէն «Մշակի» մէջ նորերում տպված յայտարարութիւնից: Գրքում պարունակված պատկերները շատ լաւ են, նոյն իսկ չքել են, բայց ուրիշ կողմից յօդուածները ընդհանրապէս շատ թույլ են, թէև նրանցից մի քանիսն ինքնահասանելի են անտղի դրոշմ են կրում, յաւանքութիւն ունենալով հասարակաց կարծիքն առաջնորդելու ուղենալու:

«Տարազ» շաբաթաթերթին գրում են, որ Շուշու քաղաքացիներին զբաղեցնում է այժմ իրանց քաղաքում ինքնավարութիւն մտցնելու խնդիրը: Շուշուցիները պատրաստուած են այդ մասին մի խնդրագիր ներկայացնել պ. կառավարչապետին, մանրամասնաբար հաղորդելով թէ որքան են վերանորոգութեան հետաքրքիր և որչափ ապարդիւն կերպով են վաճառում այդ եկամուտները:

Հոկտեմբերի 18-ին վրաց դերասանական խումբը Գաղաթային թատրոնում ներկայացրեց «Նրկ»-ը երկրասարդութիւն» պիէսան և վրաց կեանքին յարմարեցրած մի վերին աստիճանի ծիծաղելի վոքալի: Ներկայացումը գրաւել էր բաւականաչափ հասարակութիւն:

Պ. Գրիգոր Խաչատրեանց, Մոսկվայից, ստացանք նրա աշխատասիրած մի բրոշուր՝ քննադատութիւն «Նիշնի» վարդապետից պատմութեան, հրատարակութեամբ Խ. Յովհաննիսեանի: Բրոշուրը արտատպւած է «Մուրճ» ամսագրից:

Թիֆլիսի արտիստական ընկերութեան մէջ այս

մէջոմին լինելու են մի շարք օպերետային ներկայացումներ, մասնակցութեամբ հրաւիրված երգիչներ և տեղական մի քանի սկրուիններ: Հոկտեմբերի 18-ին նշանակված առաջին օպերետային «Կարմէնի» ներկայացմանը դաշիւճը կատարելապէս լի էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԲՈՅԿ

Այս օրերս հրատարակվեց Բելգիայի Բրիւսէլ քաղաքում մի քաղաքական գրքի՝ Ֆրանսերեն լեզուով, հետեւել վերնագրով. «Արդեօք Ֆրանսիան ցանկանում է պատերազմել Գերմանիայի դէմ»:

Հեղինակը, ժողովելով Ֆրանսիական աղբիւրներից այն բոլոր նիւթերը, որոնք վերաբերում են հարցին, վերջը այն եզրակացութեան է հասնում, որ թէև Ֆրանսիան սատակ ցանկանում է իրան յետ դարձնել էլզաս և Լօթարինգի կորցրած հասանգները, բայց պէտք է խոստովանել, որ այժմ չօվինիստական ոգին Ֆրանսիայում և թէև նախկին զգացմունքը գերմանացիներին դէմ նշանակուած կերպով նուազել է: Սակայն Ֆրանսիան զգում է թէ ունի մի պարտք կատարելու և եթէ պատերազմի առիթը ներկայանայ, Ֆրանսիան կօգտվի նրանից, որպէս զի վերականգնեցնէ իր նախկին քաղաքական սահմանները: Բայց այժմ Ֆրանսիացիներին մեծամասնութիւնը նայում է լինելի պատերազմի վրա՝ որպէս մի միջոցի վրա յետ դարձնելու կորցրած նահանգները, և ոչ թէ որպէս մի միջոցի վրա Գերմանիայից վրէժխնդրի լինելու: Ֆրանսիան կը կամենար միախառնել Լօթարինգի կրկին ձեռք բերել, բայց ամենին զիտակւում է չունի որ և է նոր նուաճումներ անել, որ և է նոր նահանգներ խել Գերմանիայից:

ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ ԿՐԵՏԻ ՄԷՋ

Հոկտեմբերի 17-ից Շիրայից հետեւել հեռագրին է տպված եւրոպական հայ և օտար լրագրիչներում:

«Կրէտէ կղզում մէջ դեռ նոր մի ապստամբական ծանր շարժում օրվեր է: Միաբեր նահանգին մէջ Աքրիֆո կոչված տեղը թիւրք զօրքերի և ապստամբների մէջ կարեւոր մի ընդհանրում տեղի ունեցել է: Թիւրքերը ստիպված են ետ քաշուի իրենց դիրքերէ, զանոնք 5 ժամի չափ պաշտպանել են: Երկու կողմի կորուստներն ալ շատ են: Թիւրքերը 29 մարդ ունին սպանված և 60 վիրաւորված»:

ՆԱՄԱԿ ԵՎ ԳԻՒՄՈՅՑ

Ստոկհոլմ, 10 սեպտեմբերի

Մասնաւոր գործով եւ գտնվում էի Ֆինլանդիայի Հէլսինգֆորս մայրաքաղաքում, որտեղից միայն յղացայ գնալ և տեսնել Շվեդիայի մայրաքաղաքը Ստոկհոլմը:

Ստոկհոլմից երեք ժամից ծովային ճանապարհ հեռու, Բալտիկ ծովի վրա, Ֆինլանդիայից եկող նաւերը երթարկվում են չլէդական երկօրեայ կարանտինի: Մի շարք գեղեցկատեսիլ փոքրիկ կղզիներից մէկի վրա չինված է չլէդական ճաշակով փայտեայ հոյակապ և գեղեցիկ երկաթեան նիւնիստանոցը, տեսարանը այնքան սքանչելի է, որ մարդ մոռանում է թէ ինչու համար է կանգ առել այդտեղ: Սա կարանտինն է, այլ մի գուարճալի գրօսանք հանդերձ ամենազուարճալի գրօսակայրերով, ահա այդ անտառախորտ կղզիների մէջտեղ, բայց ծովի վրա, մեր շողմնաւ խարխիւ ձգեց: Չը նայելով որ մեզ արդէն լսած էր ցամաքի վրա ոտ դնել, բայց անասելի խաղաղ եղանակը փոխարինում էր ամեն բաւականութեան և մենք, զանազանապէս ճանապարհորդներ, երկու օր շարունակ մեր կարգադրութեան տակ գտնված չորս հատ մակոյններով լողում էինք այդ անվերջ հայելի վրա, երգելով ամեն մէկը իր ազգային երգը. այո և մեր «Մայր Արաքսի» անուշ նոտերը արձագանք էին գտնում հեռու-հեռախի անծախս կղզիների ժայռերի և անվերջ ծովի անցաւ ծոցերի մէջ:

Մի գեղեցիկ և պատկերասկարի վրձնի կարօտ տեսարան էր, երբ մեր շողմնաւ կանգ առնելու պէս, մօտեցաւ մեզ չլէդական մի մակոյն, բերելով կարանտինի բժշկին. նոյն բոլորին նախ

տախտակամածի վրա մօտ 55—60 ճանապարհորդներն մի մեծ շրջան կազմեցինք. այստեղ կային ուղտահասակ և խոշորատամ անգլիկներ, և սեւամազ ծիծաղաղէմ ֆրանսիկներ, և սպիտակագէտ կեղծ-լրջահայեաց գերմանուհիք, և աշխոյժաղէմ կապուտաչեայ սկանդինավիհոններ, և ցանցառամազ ուսու ինտելիգենտներ, և զանազան միութենաներով ջէնտլմեններ, զանապաղացի, ֆինն, չլէդ, սպանիացի, հայ, գերմանացի, հրէայ և այլն: Կրկնում եմ, սա մի գուարճալի և գեղեցիկ տեսարան էր, երբ նաւապետը երիտասարդ և համալիրի դէմքով բժշկի հակողութեամբ բարձր ձայնով կարդում էր ճանապարհորդների ազգանունները. «Ռուբէն», «Նուր-բաթէ», «Բոմանով», «Իցկի», «Շուլց», «Կեպպալարի» և այլն, որին հետեւում էր զանազան ձայնով ասված մեղմից ամեն մէկի պատասխանը—«Ես եմ», «այստեղ է», յետոյ ծիծաղ, հեհեղ...:

Ճիշտ 48 ժամ յետոյ այդ պատկերը մէկ էլ կրկնվեց. բժիշկը մեզ գտնելով բոլորովին առողջ բարեմաղքեց մեզ «բարի ճանապարհ», նոյն բօւլէին երբ մենք յայտնում էինք մեր շնորհակալութիւնը բժշկին և բարձրաձայն բաւականութիւնը, շողմնաւ խողովակը սկսեց արդէն արձակել սև ծխի խիտ քուլաները, և մենք ճանապարհ ընկանք: Անցնելով մի շարք գեղեցիկ և հրաշալի տեսարաններ, երեք ժամից յետոյ մենք մտանք արդէն Շվեդիայի մայրաքաղաքը՝ Ստոկհոլմ:

Տեղիս բոլոր լրագրիչները խօլբային լուրերի համար առանձին բաժին են յատկացրել և համարեա երկրի ոչ մի լրագրի համար չէք գտնի, որ «Քուլթրա» վերնագրով յօդուածներ և լուրերի չը հանդիպէ: Ամեն կողմ խիտ կարանտիններ են հաստատված, և խիտ միջոցներ են ձեռնարկված, բայց յայտնի է, որ ոչ մի կարանտին չէ կարող արդէն լինել հիւանդութեան տարածման: Ոչ ոք չէր սպասում, որ Գերմանիան այդպէս շուտ կը հիւրընկալի խօլբային, սակայն այսօր զարմանքով տեսնում էին, որ նա անսպասելի կոտորած է անում հիւանդ-արեւմտեան Գերմանիայում: Հեռագիրը երկու արդէն լուր բերած կը լինի ձեռք, որ Համբուրգից յետոյ մի շարք քաղաքներում մահվան դէպքեր են եղել: Համբուրգից մեծ թւով և բաղմամբիւ նաւերով ճանապարհորդներ, որոնք փախչելու են եղել դէպի Լօնդօն և Ստոկհոլմ, հիւանդացի են և շատերը իսկ մեռել. այդ աչքի առաջ ունենալով Շվեդ-Նորվեգիան նախադրուչական միջոցներ խոտացնում է: Այսպէս թէ այնպէս, փախչողները տարածում են հիւանդութիւնը ամեն տեղ և ամեն չը տարածված կողմ, հետեւապէս վաղ թէ ոչ հիւանդութիւնը կը տարածվի ամբողջ Նորվեգիայում և փախչելու միջոցը կը դադարի. իսկ խօլբային ամեն տեղ կը դնայ և զանազանութիւնն այն կը լինի, որ մի տեղ առելի շատ կը մեռնեն, միւս տեղ քիչ, մոտիկ տուած թէ ինչ միջոցներով կը գնդին նրան դիմադրելու համար:

Ուսումնասիրել փախչող զանապաղացի տեսնելով, որ վարակված երկրներից դէպի իրանց հայրենիք գնացող նաւերի համար նշանակված է այնտեղ տանորեայ կարանտին, յարմար են գտնում նախ դալ Ստոկհոլմ և ապա այստեղից ազատ գնալ իրանց երկիր, այսպիսով, ի հարկէ, նրանք առելու թիւ օրվայ կարանտինից փախուտ են տալիս:

Չը նայելով որ մեր նաւը 2 օր ճանապարհորդել էր և երկու օր էլ մենք կարանտինում էինք մնացել, այնու ամենայնիւ Ստոկհոլմում գտնվեց մի անհիւրընկալ հիւանդոց, որ մեզ չընդունեցին, առարկելով որ մենք վարակված ենք «բուլբուլայով»:

Ստոկհոլմը ահագին թվով տակաւներով պատրաստ ունի դէղինֆէկցիական հիւրերին և առհասարակ քաղաքը գտնվում է սանիտարական ամենաշուրջ պայմանների մէջ:

Չը նայելով այդ ամենին, այնու ամենայնիւ պէտք է ասել, որ թէև ուշ, բայց հիւանդութիւնը հաւանաբար մուտք կը գործի և այստեղ:

Այսուամենայն, որ այդ երթարկութիւնը սխալ լինէր, և Ստոկհոլմը կարելի չունենար հեռու Արիւսից «քիտայներ» բերել տալու:

Ա. Արէլեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագիրը դժգոհութեամբ հաղորդում է, որ պարսից Շահը Պարսկաստանից ծխախոտ արտահանելու համար մեծ արտօնութիւն

ներ է շնորհել Կ. Պոլսում գոյութիւն ունեցող Պարսիկի ծխախոտային ընկերութեանը: Վերոյիշեալ ընկերութիւնը իրաւունք է ստացել Պարսկաստանից ծխախոտ արտահանել պարսկական զանաքանիւն 9 միլիոն վճարելու պայմանով 25 տարվայ ընթացքում:

Բերլինի քաղաքային խորհուրդը վճեց, որ Գերմանիայի մայրաքաղաքը կը մասնակցէ Պետերբուրգում բացվելի «առողջապահական» ցուցահանդէսին:

Ունգարական դէպքայինները, քննելով Աւստրո-Ունգարիայի արտաքին քաղաքականութիւնը, լսեցին զեկուցանող Ֆալկի ատենադասութիւնը: Զեկուցանողն ասեց, որ Աւստրո-Ունգարիան և Ռուսաստանը չունեն միմյանման շահեր, ուստի, այդ տեսակէտից, հիմք չը կայ Աւստրո-Ունգարիայի համար Ռուսաստանի հետ ձեռք ձեռքի տուած ընթանալ:

Սպանիական մանուկ թագաւորը, որը այժմ 7 տարեկան է, վերջերս բաւական ծանր հիւանդացի էր, բայց կառավարութիւնը ծածկում էր ժողովրդից նրա հիւանդութիւնը: Մարդ ակամայ յիշում է այն հանգամանքը, որ երբ նոյեմբերին 1885 թվի Ալֆոնս XII թագաւորը մեռաւ, սպանիական կառավարութիւնը ծածկում էր նրա հիւանդութիւնը մինչև այն րօպէս, երբ արդէն թագաւորը հոգեւորքի մէջ էր:

ԽԱՆԵՆ ԼՈՒՐԵՐ

Մինչև անգամ կառավարչական հոգեբեր չեն կարողանում թուլացնել ՏՅ-ամեայ Գաղաթային եռանդը: Նա այս օրերս Օքսֆորդում կարգաւոր է մի դասախոսութիւն հետեւալ նիւթի վրա. «Համայնարանների մասին միջին դարերում և առանձնապէս Օքսֆորդի համալսարանի մասին»:

\*\*\*

Մի հրէայ, որը մեղադրվում է գողութեան մէջ, խնդրում է դատաւորին մի շարաթով յետաձգել գործի քննութիւնը:

Ինչի էք ցանկանում յետաձգել գործը, հարցնում է դատաւորը:

Փաստաբանս հիւանդ է, պատասխանում է հրէան:

Ձեռք ինչ հարկաւոր է փաստաբան. չէ որ ձեռք բռնեցին զողացած իրեղենները ձեռքիս:

Ճշմարիտ է, պ. դատաւոր:

Ուրեմն ձեռք ինչ հարկաւոր է փաստաբանի պաշտպանութիւնը, նա ինչ կարող է ասել ձեր արդարացման օգտին...:

Հէջի իսկ այդ պատճառով ես ցանկանում եմ փաստաբան ունենալ, որովհետեւ ինքն էլ սաստիկ հետաքրքրվում եմ լսելու ինչ պիտի ասի փաստաբանս ինձ պաշտպանելու համար:

\*\*\*

Ես մի շատ խելացի չուն եմ ունեցել, պատմում էր մի պարսիկ լրագրիչին. երեւակայի՜ր՝ այդ չունը այնպէս էր ճանաչում մարդկանց, որ ճիշդ կերպով զանազանում էր աչինւ մարդկանց անաղինները:

Ինչպէս...:

Այո, անաղին, անպիտան մարդկանց՝ վրա նա յարձակվում էր և կծում էր նրանց...:

Ապա ուր է այժմ քո այդ երեւելի չունը:

Ես նրան տանեցա վանդեցի, եղբայր, որովհետեւ նա մի օր ինձ վրա էլ յարձակվեց ու ինձ էլ կծեց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՐ

ՊԱՐԻՋ, 16 հոկտեմբերի: Արմատական Տերիէ մի առաջարկութիւն արեց, որ ներումն չնորսվի գործադուլի ժամանակ մեղադրվածներին, ուր առաջարկը մշակված է եղել արմատական պատգամաւորների ժողովում: Վիետ յայտնեց, որ եթէ Կարմայի գործադուլ արած բանտրները վերանորոգէին իրանց աշխատանքները, կառավարութիւնը կը ներէր դատապարտված բանտրներին, իսկ ներումն չնորսելը՝ նա մերժում է: Տերիէի առաջարկը մերժված է:

ՍԹԵՆԲԻ, 16 հոկտեմբերի: Գեղեցիկ եղանակը նպատակ է թաղաւորի և թագուհու արձաթեայ հարսանիքի տօնելուն. քաղաքը զարդարված է ուսուաց, յուսաց և դանիակային դրօշներով, տաճարում մատուցվեց հանդիսաւոր պատարագ, որին ներկայ էին թագաւորական տան անդամները և զիպոմատական մարմինը: Ժողովուրդը ողջունեց թագաւորական գնացքը ուրախալի գոչելու ներով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 հոկտեմբերի: Գաբրիել ակցիդը շատացնելու նախադիժը արդէն ներկայացվում է պետական խորհրդի քննութեան: Երկաթուղային գործերի ղեկավարամենտի փոխ-գլխիկ



Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лористъ-Меликовская ул., д. каз.